ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2014թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 5
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 7
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....8

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 71

"Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության (Կազմակերպություն) ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփն ու այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա ձևված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ կազմակերպության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության ֆինանսական վիճակը, այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
30 հունիսի, 2015թ.

Սամվել Գազարյան
Տնօրեն

Գևել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի
իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ծնթ.	31.12.2014թ. AMD'000	31.12.2013թ. AMD'000
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	3	426,087	1,163,437
Կանխավճարներ	4	17,271,842	13,118,623
Պաշարներ		278	370
Այլ ընթացիկ ակտիվներ		1,093	6,339
		17,699,300	**14,288,769**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	17,882	7,265
Ոչ նյութական ակտիվներ		1,496	524
		19,378	**7,789**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**17,718,678**	**14,296,558**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	6	8,642,845	3,020,858
Հետերաշխիքային գումարներ		2,246,279	359,480
		10,889,124	**3,380,338**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	5	19,378	7,788
		19,378	**7,788**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**10,908,502**	**3,388,126**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Ֆինանսավորում			
ԱԶԲ 2561-ARM(SF) վարկից		*18,793,456*	*8,286,320*
ԱԶԲ 2729-ARM(SF) վարկից		*15,675,692*	*8,101,155*
Հայաստանի Հանրապետությունից		*4,093,884*	*869,278*
ՎՁԵԲ- ՀՀ համաֆինանսավորում		*9,190*	*7,152*
ՀՕՏԾ մասով		*3,263,311*	*2,304,485*
Այլ		*128,874*	*128,754*
		41,964,407	**19,697,144**
Ամողական ծրագրային ծախսեր		**(34,713,016)**	**(8,947,957)**
Այլ կուտակված հավելուրդ/(պակասուրդ)		**(441,215)**	**159,245**
ԸՆԴԱՄԵՆԸ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		**6,810,176**	**10,908,432**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարության կողմից 2015թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:

Արթուր Սարգսյան — Գլխավոր գործադիր տնօրեն

Սերգեյ Մելիք-Յոլչյան — Ֆինանսատնտեսական ղեկավար / գլխավոր հաշվապահ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	2014թ. AMD'000	2013թ. AMD'000
Եկամուտներ		
Ստացված ֆինանսավորում		
ԱՋԲ 2561-ARM(SF) վարկից	*10,507,136*	*322,508*
ԱՋԲ 2729-ARM(SF) վարկից	*7,574,537*	*7,646,827*
Հայաստանի Հանրապետություն	*3,224,606*	*387,891*
ՎՋԵԲ- ՀՀ համաֆինանսավորում	*2,038*	*7,152*
ՀՕՏՓ	*958,826*	-
Այլ	*120*	*105,720*
Ընդամենը եկամուտ	**22,267,263**	**8,470,098**
Ծախսեր		
Ծրագրի ծախսեր		
Շինարարական աշխատանքներ	*20,505,910*	*2,450,815*
Խորհրդատվական ծառայություններ	*1,019,189*	*1,013,213*
Ծրագրի կառավարման աջակցություն	*245,814*	*165,842*
Հարկեր,տուրքեր	*2,593,605*	*423,423*
ՎՋԵԲ- ՀՀ համաֆինանսավորում	*2,905*	*5,505*
ՀՕՏՓ ծախսեր	*1,397,636*	*1,111,777*
Այլ	-	*105,720*
Ընդամենը ծախսեր	**25,765,059**	**5,276,295**
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(կորուստ)	**(600,460)**	**137,493**
Տարվա հավելուրդ/(դեֆիցիտ)	**(4,098,256)**	**3,331,296**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի
իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ
2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

	2014թ. AMD'000	2013թ. AMD'000
ԳՈՐԾԱՌԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ		
Մուտքեր		
Ստացված ֆինանսավորում		
ԱԶԲ 2561-ARM(SF) վարկից	*419,693*	*177,500*
Հայաստանի Հանրապետություն (համաֆինանսավորման գծով)	*3,171,087*	*387,891*
ՎԶԵԲ- ՀՀ համաֆինանսավորում	*2,038*	*7,152*
Հայաստանի Հանրապետություն (ՀՕՏԾ)	*958,826*	-
Այլ	*79*	*105,720*
	4,551,723	**678,263**
Ելքեր		
Ծրագրային ծախսումներ		
Խորհրդատվական ծառայություններ	*92,100*	*19,087*
Ծրագրի կառավարման աջակցություն	*197,557*	*141,891*
Հարկեր	*3,165,907*	*570,305*
ՎԶԵԲ- ՀՀ համաֆինանսավորում	*2,905*	*5,505*
ՀՕՏԾ ծախսեր	*1,822,101*	*1,133,083*
Այլ	*2,736*	*65,897*
	5,283,306	**1,935,768**
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(731,583)	(1,257,505)
Դրամական միջոցների զուտ նվազում	(731,583)	(1,257,505)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն	(5,767)	2,124
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդ	1,163,437	2,418,818
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդ	**426,087**	**1,163,437**

1. Ընդհանուր տեղեկություններ

"Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ Կազմակերպություն) հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թ. մարտի 11–ի N 446–Ն որոշումով: Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունն է:

Կազմակերպության կանոնադրությունը պետական ռեգիստրում գրանցվել է 2010թ. մայիսի 10-ին, գրանցման համարը՝ 286.210.07571, վկայական՝ 03Ա088071:
Կազմակերպության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Պուշկինի փողոց 58:

Կազմակերպության գործունեության հիմնական նպատակը Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման աշխատանքների կատարումն է:
Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված Ընդհանակային ֆինանսավորման համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել բազմափուլ (բազմատրանշային) վարկավորում՝ 500 միլիոն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով:

Ներդրումային ծրագրի խնդիրն է՝ Հայաստանի Հանրապետության տարածքում զարգացնել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը: Ծրագիրը նախատեսում է նաև ճանապարհային ենթակառուցվածքի, ճանապարհային ցանցի կառավարման կարողությունների զարգացման համար ֆինանսավորում և Ծրագրում ընդգրկված ճանապարհների անվտանգության համապատասխանեցում միջազգային ընդունված նորմերին: Համաձայնագրով ֆինանսավորվող Հյուսիս-հարավ ճանապարհը կազմում է 556 կմ՝ ձգվելով Վրաստանի սահմանից՝ Բավրա, մինչև Իրանի սահմանը՝ Մեղրի, անցնելով Գյումրի, Աշտարակ, Երևան, Գորիս, Կապան քաղաքներով:

ԱԶԲ-ն Բազմափուլ Ֆինանսական Գործիքի (ԲՖԳ) ներքո վարկերը տրամադրում է ըստ առանձին ծրագրերի՝ տրանշների, երբ վերջիններս պատրաստ կլինեն ֆինանսավորման համար՝ համաձայնագրով սահմանված պահանջների բավարարման դեպքում: Յուրաքանչյուր վարկ հանդիսանում է առանձին տրանշ: Տրանշները կարող են ունենալ տարբերվող ֆինանսավորման պայմաններ, տրամադրվել միաժամանակ կամ հաջորդաբար:
Տրանշների տրամադրման վերջնաժամկետը 2017թ. դեկտեմբերի 31-ն է:

Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2009թ. հոկտեմբերի 12-ին ստորագրված "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 1" վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 38,443,000 SDR (Հատուկ Փոխարկման Իրավունք) գումարով թիվ 2561-ARM(SF) վարկը:

Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2011թ. մայիսի 30-ին ստորագրված "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 2" վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է 170,000,000 USD (ԱՄՆ դոլար) գումարով 2729-ARM վարկը:
Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2014թ. մարտի 11-ին ստորագրված "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 3" վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է 100,000,000 USD (ԱՄՆ դոլար) գումարով 2993-ARM վարկը:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության կողմից հրապարակված Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունները ներառում են.
- ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն,
- ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն,
- դրամական հոսքերի մասին հաշվետվություն,
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, ներառող՝
  - հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ,
  - այլ ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

2.2 Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունք

Ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական հոսքերը արտացոլող տեղեկատվության, պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքը:
Հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են, երբ դրանք տեղի են ունենում (այլ ոչ թե միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել): Հետևաբար, գործարքները և դեպքերը հաշվառվում են և ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.4 Ներկայացման արժույթը

Այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է (AMD)՝ հազարների ճշտությամբ:

2.5 Գործարքներ արտարժույթով

Արտարժույթը դա ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է: Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ներկայացման արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ներկայացման արժույթի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ.
ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,
բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 474.97 դրամ (2013թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 405.64 դրամ):

2.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:
Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ կիրառելով մաշվածության հետևյալ տարեկան տոկոսաչափերը՝

Տրանսպորտային միջոցներ	12%
Համակարգչային սարքավորումներ	30%
Գրասենյակային գույք	12%

2.7 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

2.8 Կանխավճարներ

Կանխավճարները հաշվառվում են՝ արժեքից հանելով արժեզրկումից կորուստները: Եթե կա հայտանիշ, ըստ որի կանխավճարի հետ կապված ակտիվը, ապրանքը կամ ծառայությունը չի ստացվելու, կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում, իսկ դրա համապատասխան արժեզրկումից կորուստը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում:

2.9 Դրամաշնորհներ կառավարությունից

Պետական դրամաշնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են Կազմակերպության կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

ա) Կազմակերպությունը կատարելու է դրամաշնորհներին հարակից պայմանները, և
բ) դրամաշնորհներն ստացվելու են:
Հիմնական միջոցներին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում որպես եկամուտ գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Ծախսերին վերաբերող դրամաշնորհները հետաձգվում են և ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

2.10 Հարկեր

Հարկերը հաշվարկվում և վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

3. Դրամական միջոցներ

	31.12.2014թ. AMD'000	31.12.2013թ. AMD'000
Ընթացիկ հաշիվ (ADB 2561-ARM(SF) վարկ), USD	87,400	12,347
Ընթացիկ հաշիվ (ADB 2561-ARM(SF) վարկ), AMD	-	1
Ընթացիկ հաշիվ (Հայաստանի Հանրապետություն), AMD*	92,793	53,474
Ընթացիկ հաշիվ (Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորում), AMD	12,843	422
Ընթացիկ հաշիվ (Հայաստանի Հանրապետություն-ՀՕՏԾ), AMD	232,271	1,095,546
Ընթացիկ հաշիվ (Հայաստանի Հանրապետություն-ՎԶԵԲ), AMD	780	1,647
	426,087	**1,163,437**

** Մնացորդը ներկայացնում է ընթացիկ հաշվին հաշվեգրված տոկոսներ, որոնք ընթացիկ տարում համարվում են որպես ՀՀ կողմից համաֆինանսավորում:*

4. Կանխավճարներ

	31.12.2014թ. AMD'000	31.12.2013թ. AMD'000
Կանխավճարներ շինարարության գծով (ա)	16,824,640	12,823,372
Կանխավճարներ ՀՕՏԾ-ի գծով (բ)	425,239	59
Կանխավճարներ խորհրդատվության գծով	21,963	295,192
	17,271,842	**13,118,623**

(ա) Տրանշ 1 և Տրանշ 2 ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական աշխատանքների գծով պայմանագրի համաձայն, տրված կանխավճարները ենթակա են

մարման աշխատանքների ամողական գումարի 30%-ի կատարմանը հաջորդող կատարողական ակտերի վճարման ենթակա գումարից:

(բ) Հողերի օտարման գծով դատական հայցերի բավարարման համար ՀՀ դեպոզիտարիային փոխանցված գումարներ, որոնց գծով դատական վճիռները դեռևս չեն կայացվել:

5. Հիմնական միջոցներ

AMD'000

	Տրանսպորտային միջոցներ	Համակարգչային սարքավորումներ	Գրասենյակային գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 1 հունվարի 2013թ.	12,000	16,328	6,011	34,339
Ավելացումներ	-	-	3,908	3,908
Նվազեցումներ	(12,000)	-	-	(12,000)
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	-	16,328	9,919	26,247
Ավելացումներ (ա)	-	9,167	7,280	16,447
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	-	25,495	17,199	42,694
Կուտակված մաշվածություն				
Առ 1 հունվարի 2013թ.	3,831	16,082	1,293	21,206
Տարվա մաշվածություն	2,339	221	1,386	3,946
Նվազեցումներ	(6,170)	-	-	(6,170)
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	-	16,303	2,679	18,982
Տարվա մաշվածության	-	3,336	2,494	5,830
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	-	19,639	5,173	24,812
Ընթացիկ արժեք				
Առ 1 հունվարի 2013թ.	8,169	246	4,718	13,133
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	-	25	7,240	7,265
Առ 31 դեկտեմբերի 2014թ.	-	5,856	12,026	17,882

(ա) համակարգչային տեխնիկա և գրասենյակային գույք, որոնք ձեռք են բերվել "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 1" ծրագրի շրջանակներում՝ Ծրագրի կառավարման աջակցության նպատակով:

6. Կրեդիտորական պարտքեր

	31.12.2014թ. AMD'000	31.12.2013թ. AMD'000
Շինարարական աշխատանքների գծով վճարվելիք գումար	156,283	1,583,510
Պահուստ Խորհրդատուի և շինարարական աշխատանքների գծով (ա)	8,250,217	1,292,979
Խորհրդատուի գծով	224,067	77,690
Աշխատավարձի գծով	10,908	4,706
Հարկերի գծով	124	1,221
Հաշվեգրված տոկոսներ՝ փոխանցվելիք պետական բյուջե	-	53,519
Այլ	1,246	7,233
	8,642,845	3,020,858

(ա) Հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությանը ներկայացված կատարողական ակտերի գումարը, որոնք ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ դեռևս հաստատված չեն:

7. Ուղղակի մարված ծախսեր

Հաշվետու տարում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում չեն ներառվել ԱԶԲ-ի կողմից կատարված ուղղակի մարումներ.

- շինարարության գծով՝ 17,166,058 հազար դրամ համարժեք գումար (2013թ.՝ 7,363,083 հազար դրամ);
- խորհրդատվական ծառայությունների գծով՝ 474,552 հազար դրամ համարժեք գումար (2013թ.՝ 283,275 հազար դրամ):

8. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ, Կազմակերպության դեմ առկա են որոշ դատական հայցեր կապված հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի հետ: